

«Հետք»-ի մրցանակները

2002

Հետաքննական լրագրության 1-ին մրցանակ՝ շնորհված «Ինտերնյուս Հայաստան»-ի կողմից:

2003

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն ճանաչվել է տեղեկատվություն ստանալու իրավունքը լավագույնս իրացրած կազմակերպություն ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից:

2004

- «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ»-ի հայկական մասնաճյուղը [մրցանակի](#) է
- արժանացրել «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ին Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարում նշանակալի ներդրման համար:
- «Հրազդանի կիրճը երեկ, այսօր և վաղը» ֆիլմաշարն արժանացել է «Էկոլոգիական հարցերը մեղիայում» մրցույթի երկրորդ մրցանակին: Մրցույթը կազմակերպել էր Օրհուսի կենտրոնը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:
- «Հետք»-ի գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանն արժանացել է «Լավագույն հետաքննական ֆիլմ» առաջին մրցանակին, «Ինտերնյուս Հայաստան»-ի կողմից:

2005

«Հետք»-ի գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանին ԵԱՀԿ երևանյան գրասենյակը շնորհել է 1-ին մրցանակ «Լավագույն Էկոլոգիական ֆիլմ» անվանակարգում:

2007

Բնության համաշխարհային հիմնադրամի Էկոլոգիական լրագրության մրցույթում «Հետք»-ը ստացել է խրախուսական մրցանակ:

2008

2008 թ.-ին Նորվեգիայի Լիլեհամեր քաղաքում տեղի ունեցած Գլոբալ հետաքննական լրագրության կոնֆերանսի ժամանակ «Հետք»-ի գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանին շնորհվել է Հետաքննական լրագրության միջազգային մրցանակ (Global Shining Light Award) Բնապահպանության՝ այդ ժամանակ արդեն նախկին նախարար Վարդան Այվազյանի կողմից Հայաստանի հանքերը յուրայիններին օտարելու գործընթացի մասին հողվածաշարի համար:

2009

ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մարի Յովանովիչը «Հետք»-ի գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանին շնորհել է ԱՄՆ դեսպանատան «Հայաստանի ազատության պաշտպանի» մրցանակը:

2011

- Տարածքային կառավարման նախարարությունը «Հետք»-ին շնորհել է «Համայնքային կյանքի լավագույն լուսաբանում 2011» [մրցանակը](#) Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի հիմնադրման 15-ամյակի կապակցությամբ:
- «Հետք»-ի գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանը ստացել է «Մամուլի ազատության ժամանակը» մրցանակը՝ հետաքննական լրագրության զարգացման, անկախ դիրքորոշման և մասնագիտական խիզախության համար^[2]:
- «Հետք»-ի թղթակից Լարիսա Փարեմուզյանն արժանացել է «Խոսքի ազատություն» մրցանակին մանկապոռնիկի վերաբերյալ իր հետաքննական աշխատանքի համար:
- «Հետք»-ը [ճանաչվել է](#) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդրի ջատագով:

2012

- Թրաֆիքինգի հարցերի խորհուրդը գովասանքի մեղալով է պարզևատրել «Հետք»-ին՝ մարդկանց թրաֆիքինգի շարունակական լուսաբանման և դրա կանխարգելման համար:
- «Հետք»-ի լրագրող Երանուհի Սողոյանը «Նա/Նե» լրագրողական հրապարակումների մրցանակաբաշխությանը «Առցանց կամ բլոգի հոդված» անվանակարգում զբաղեցրել է առաջին տեղը:
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հավաստագիր է տվել «Հետք»-ին՝ 2011թ. ընթացքում գենդերային հավասարության խնդիրները պարբերաբար և լավագույնս լուսաբանելու համար:
- Ամերիկյան իրավաբանների ասոցիացիան «Հետք»-ի գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանին շնորհել է «Հրանտ Դինք ազատության մրցանակ»՝ Հայաստանում ազատության և ազատ խոսքի պաշտպանության համար:
- «Հետք»-ի լրագրող Սոնա Ավագյանը Հաշմանդամության խնդրի լուսաբանման «Արևածաղիկ» 10-րդ մրցույթում «Լավագույն տպագիր հոդված» անվանակարգի 1-ին մրցանակն է ստացել:

2013

- «Հետք»-ը և «Հետք»-ի լրագրող Մարինե Մարտիրոսյանն արժանացել են «Գրքի ընկեր» մրցանակին գիրքը և գրականությունը լավագույնս ներկայացնելու համար: Մրցանակը շնորհել են «Անտարես» հրատարակչությունը, «Գրանիշ» գրական հիմնադրամը, գրականագետներ Հասմիկ Հակոբյանն ու Արքմենիկ Նիկողոսյանը:
- Միգրացիայի միջազգային օրը «Հետք»-ի լրագրող Երանուհի Սողոյանը երկրորդ տեղի մրցանակ է ստացել «Ճամպուկ-2013» մրցույթի «Լավագույն հոդված» անվանակարգում: Մրցույթը հայտարարել էր «Մարդը կարիքի մեջ» չեխական կազմակերպության հայաստանյան գրասենյակը:

- «Հետք»-ի լրագրող Գրիշա Բալասանյանը դատական բարեփոխումների լուսաբանմանը նվիրված լրագրողական մրցույթում զբաղեցրել է երկրորդ տեղը:

2014

- «Հետք»-ը «Խոսքի ազատության» մրցանակ է ստացել Գյումրու «Ասպարեզ» ակումբի ամենամյա մրցանակաբաշխությանը օֆշորային հաշիվների ու հարակից խնդիրների հետաքննության և բացահայտումների համար:
- ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կազմակերպած «Թրաֆիքինգի և դրա դեմ պայքարի լուսաբանման ամենամյա մրցանակաբաշխություն-2014»-ում «Տպագիր և առցանց լրատվամիջոցներ» անվանակարգում երրորդ մրցանակին է արժանացել «Հետք»-ի լրագրող Երանուհի Սողոյանը՝ [«Նեյլին գյուղից ցանկանում են վտարել»](#) հոդվածի համար:
- «Համընդհանուր իրավունքների մրցանակաբաշխություն-2014»-ի շրջանակներում «Հետք»-ն արժանացել է «Մեդիա գերազանցություն» մրցանակի հետաքննական լրագրության և մարդու իրավունքների լուսաբանման մեջ ակնավոր լրատվական պրոֆեսիոնալիզմի համար:

2015

- «Համընդհանուր իրավունքների մրցանակաբաշխություն-2015»-ի շրջանակներում «Հետք»-ի լրագրող Զարուհի Մեջլումյանն արժանացել է «Մեդիա գերազանցություն» մրցանակի՝ իր բացառիկ արհեստավարժության և ցմահ դատապարտյալների մասին գրելու ու նրանց իրավունքները պաշտպանելու համար:
- «Թվապատում 2015. պատմություններ փոփոխությունների մասին» լրագրողական մրցույթում «Հետք»-ն արժանացել է մրցանակի երեք անվանակարգում՝ «Դիտակ. հետաքննական լրագրություն», «Ռեինֆորմացիա. բարեփոխումների լավագույն կիրառում» և «Մեդիա 3.0. տեխնոլոգիաների լավագույն կիրառում»:
- «Դիտակ. հետաքննական լրագրություն» անվանակարգում հաղթող է ճանաչվել Անի Հովհաննիսյանի և Մարինե Մադաթյանի հեղինակած [«Ժամկետանց ռենտգեն սարքեր. ռադիացիոն անվտանգությունը Հայաստանում փակ թեմա է»](#) նյութը:
- «Ռեինֆորմացիա. բարեփոխումների լավագույն կիրառում» անվանակարգում մրցանակ է ստացել Զարուհի Մեջլումյանը՝ «Հետք»-ում հրապարակված [«Հայաստանը կունենա ԴՆԹ փորձարկման վերջին սերնդի գործիք»](#) նյութի համար:
- «Մեդիա 3.0. տեխնոլոգիաների լավագույն կիրառում» անվանակարգում հաղթող է ճանաչվել Անի Հովհաննիսյանի և Նարեկ Ալեքսանյանի [«Հայաստանի օրինական և անօրինական ադրավայրերը. Տավուշի մարզ»](#) մուլտիմեդիա նյութը:

- Հաշմանդամության խնդիրներին նվիրված «Հավասար հնարավորություններ» 13-րդ մրցույթում, «Լրագրողական հոդված» անվանակարգում 1-ին մրցանակն է ստացել «Հետք»-ի լրագրող Քրիստինե Աղալարյանը՝ ««Մատչելի» Երևան՝ նկարված թեքահարթակներով» հոդվածի համար: Մրցույթը կազմակերպել էին «Հույսի կամուրջ» և «Առաքելություն Արևելք» կազմակերպությունները:

2016

- «Օքսֆամ» միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի «Պարենային անվտանգություն և սնուցում» թեմայով լրագրողական մրցույթում «Լավագույն առցանց հրապարակում» անվանակարգում հաղթող է ճանաչվել «Հետք»-ի լրագրող Տաթև Խաչատրյանը՝ «Կաթնաշոռ՝ աղիքային ցուպիկով և խմորասնկերի ու բորբոսասնկերի անթույլատրելի քանակով» հոդվածի համար:
- «Հետք»-ի լրագրող Նաիրա Հայրապետյանը Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) հայտարարած մրցանակաբաշխությանն արժանացել է մրցանակի երկու անվանակարգում՝ «Ամենաբազմազան թեմաներով հրապարակումների հեղինակը» և [«Ամենահուզիչ հոդվածի հեղինակը»](#):
- Արցախյան պատերազմի ֆոտովավերագրությունն անձնվիրաբար և հետևողականորեն իրականացնելու համար «Հետք»-ի լուսանկարիչ-օպերատոր Հակոբ Պողոսյանն արժանացել է Երևանի մամուլի ակումբի հիմնադիր անդամ, ֆոտոլրագրող Ռուբեն Մանգասարյանի անվան մրցանակին:
- «Հետք»-ի լրագրող Գայանե Սարգսյանն առաջին մրցանակի է արժանացել [«Երբ ասացի, որ երեխա ենք ունենալու, նա հրաժարվեց ինձնից էլ, երեխայից էլ»](#). 22-ամյա մոլդկան Մարիայի պատմությունը հոդվածի համար կրոնական հանդուրժողականության թեմայով լավագույն լրագրողական նյութի ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ, որը կազմակերպել էր «Եվրասիա» համագործակցության հիմնադրամը:
- «Հետք»-ի լրագրողները Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Թվապատում. պատմություններ փոփոխությունների մասին» մրցույթում 4 մրցանակի են արժանացել:
- Գրիշա Բալասանյանի և Դավիթ Բանույանի պատրաստած [«Պատգամավորների թանկարժեք նվերները»](#) մուլտիմեդիա նյութը ստացել է «Մեդիա 3.0. տեխնոլոգիաների լավագույն կիրառում» մրցանակը:
- «Դիտակ. հետաքննական լրագրություն» անվանակարգի մրցանակը տրվել է «Հետք»-ի երկու հրապարակման՝ [«Պանաման նվաճած հայ գեներալը. Միհրան Պողոսյանի օֆշորային ընկերությունները և հաշիվները շվեյցարական բանկերում»](#) (Քրիստինե Աղալարյան, Էդիկ Բաղդասարյան) և [«Ինչպես խաբել հասարակությանը՝ Կառավարության որոշումներում մշակութային վերնագիր դնելով. «Գրքի աշխարհ»-ի հետքերով»](#) (Մարինե Մադաթյան):

- Երանուհի Սողոյանի [«Ոսկի՞, թե՞ հիվանդածին ապագա Ամուլսարից»](#) հոդվածաշարն արժանացել է խրախուսական մրցանակի:
- «Հետք»-ի թղթակից Գայանե Սարգսյանը «Հավասար հնարավորություններ» 14-րդ մրցույթում, որը կազմակերպել էին «Հույսի կամուրջ» և «Առաքելություն Արևելք» ՀԿ-ները, արժանացել է առաջին մրցանակի [«Ներառական և հատուկ դպրոցների արանքում»](#) հոդվածի համար:

2017

- «Հետք»-ի լրագրող Հրանտ Գալստյանը հաղթող է ճանաչվել Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի ամենամյա «Թվապատում» մրցույթի «Դիտակ. հետաքննական լրագրություն» անվանակարգում: Նրա՝ «Ապրիլի գոհերը» հոդվածը Ժյուրիի կողմից ճանաչվել է տարվա լավագույն հետաքննական նյութ:
- «Հետք»-ի թղթակիցներ Գրիշա Բալասանյանը և Զարուհի Մեջլումյանը արժանացել են պատվավոր մրցանակի Հայաստանի բանտերում սննդի մասին հետաքննական [հոդվածաշարի](#) համար:
- Ինֆորմացիայի ազատության կենտրոնը «Հետք»-ը ճանաչել է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը լավագույնս կիրառող լրատվամիջոց: Մրցանակը հանձնվել է «Ոսկե բանալի, Ժանգոտ կողպեք» մրցանակաբաշխության ժամանակ:
- ԱՄՆ ԱԶԳ աջակցությամբ և Համայնքների ֆինանսիստների միավորման համագործակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀաՄաՏեղ) ծրագրի շրջանակում «Հետք»-ի լրագրող Երանուհի Սողոյանը մրցանակ է ստացել տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների թեմային հավատարիմ մնալու համար:
- Հրապարակախոսական նյութի ինքնատիպ մատուցման համար լրագրող Լուսինե Հովհաննիսյանը, ով այդ տարի համագործակցում էր «Հետք»-ի հետ, արժանացել է Երևանի մամուլի ակումբի մրցանակին:
- Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) «Ներառականությունը Հայաստանում» խորագրով ամենամյա մրցույթում մրցանակի է ստացել «Հետք»-ի թղթակիցներ Դիանա Ղազարյանի և Սարո Բաղդասարյանի [հրապարակումը](#):
- «Հետք»-ի լրագրող Անի Հովհաննիսյանի «Եվրոպայում ապաստան խնդրած հայաստանցիների 90%-ը մերժվել է» նյութն արժանացել է 3-րդ տեղի մրցանակի՝ «Ճամպրուկ 2017» լրագրողական մրցույթում:
- Սպառողների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա շրջանակներում Սննդի անվտանգության պետական ծառայությունը տարվա ընթացքում սննդամթերքի անվտանգության ոլորտը լավագույնս լուսաբանելու համար մրցանակ է շնորհել «Հետք»-ի լրագրող Տաթև Խաչատրյանին:

2018

- Միգրացիոն թեմաներին նվիրված «Ճամայրուկ-2018» ամենամյա լրագրողական մրցույթում «Լավագույն մուլտիմեդիա նյութ» անվանակարգում մրցանակի է արժանացել «Հետք»-ի թղթակիցներ Անի Հովհաննիսյանի և Սարո Բաղդասարյանի [նախագիծը](#)՝ սեզոնային աշխատողների մասին:
- «Թվապատում 2018» մրցույթի «Մեդիա 3.0. տեխնոլոգիաների լավագույն կիրառում» անվանակարգում հաղթող է ճանաչվել «Հետք»-ի լրագրողներ Անի Հովհաննիսյանի, Նարեկ Ալեքսանյանի և Դավիթ Բանուշյանի «Կոմունալ վճարներ. ինչպես են տաքանում Երևանում» հոդվածը:
- «Թվապատում 2018»-ի հետաքննական «Դիտակ. հետաքննական լրագրություն» անվանակարգում մրցանակի է արժանացել «Հետք»-ի լրագրողներ Գրիշա Բալասանյանի և Հրանտ Գալստյանի «Չվարակազերծված ջուր, անբարեկարգ ջրամատակարարման համակարգ. 10 մարզի խմելու ջրի վիճակը» հոդվածը:
- «Թվապատում 2018»-ի հատուկ մրցանակին է արժանացել լրագրող Երանուհի Սողոյանի «Դարիկի պահապան տիրուհին՝ Իրինա Թադևոսյանը» նյութը:

2019

- Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Դիտակ. հետաքննական լրագրություն» անվանակարգում լավագույնն է ճանաչվել «Հետք»-ի լրագրող Քրիստինե Աղալարյանի «Հայկական ոսկու գինը. աղքատ համայնքներ և լքված պոչամբարներ» հետաքննությունը:
- Նույն մրցույթի «Մեդիա 3.0.տեխնոլոգիաների լավագույն կիրառում» անվանակարգում մրցանակի է արժանացել «Հետք»-ի լրագրողներ Դիանա Ղազարյանի և Անի Հովհաննիսյանի «Մենակ դասարանում. Հայաստանում 452 երեխա դասարանի միակ աշակերտն է» մուլտիմեդիա պատմությունը:
- «Թվապատում» մրցույթում Երևանի քաղաքապետարանի անունից հատուկ մրցանակ է շնորհվել «Հետք»-ի լրագրողներ Սեդա Ղուկասյանի, Սարո Բաղդասարյանի, Տիրայր Մուրադյանի՝ «Կենտրոնում 14 մանկապարտեզ է փակվել. տարածքը՝ վաճառվել» հետաքննությանը:
- «Թվապատում» մրցույթում հատուկ հիշատակման պատվոգրեր են ստացել «Հետք»-ի լրագրողներ Անի Հովհաննիսյանը՝ «Պաշտոնյաների ունեցվածքի և փոխկապակցված անձանց բաց շտեմարան», Մարինե Մարտիրոսյանն ու Վահե Սարուխանյանը «Փոքր երկրի մեծ, «թունավոր» աչքը. Արծվանիկի պաշամբար» լրագրողական աշխատանքների համար:
- «Թվապատում» մրցույթում հատուկ մրցանակի են արժանացել Մարինե Մարտիրոսյանը և Վահե Սարուխանյանը՝ «Հայաստանի «փակ քաղաքները» հոգեբուժարաններ» հետազոտական նյութի համար:
- Շրջակա միջավայրին նվիրված «Արևորդի» 9-րդ միջազգային փառատոնում «Լավագույն լրագրողական հետաքննություն» անվանակարգում հաղթող է

ճանաչվել «Հետք»-ի թղթակից Քրիստինե Աղալարյանի (օպերատոր՝ Սարո Բաղդասարյան) «Հայկական ոսկու գինը» ֆիլմը:

- Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը «Հետք»-ի բանտային թղթակից Մհեր Ենոքյանին հատուկ մրցանակի է արժանացրել իր բանտային նամակների համար: Մրցույթը նվիրված էր փակ հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանությանը:
- «Հետք»-ի բանտային թղթակից Մհեր Ենոքյանը Հանրային լրագրության ակումբի և «Բաց հասարակության հիմնադրամներ» կազմակերպության՝ «Հանուն մարդու իրավունքների. կրթությունը բանտում» ծրագրի շրջանակում հատուկ մրցանակի է արժանացել բարձրագույն կրթություն ստանալու իր փորձի մասին հոդվածի համար:
- «Հետք»-ի թղթակից Անյա Սարկիսովան կլիմայի փոփոխությանն առնչվող բնապահպանական թեմայով հրապարակման համար մրցանակի է արժանացել ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի կազմակերպած «COP25-Գործիք հիմա» մրցույթում:
- Մարինե Մարտիրոսյանի և Վահե Սարուխանյանի «Հայաստանի «փակ քաղաքները» հոգեբուժարաններ» հետազոտական նյութը երկու հատուկ մրցանակ է ստացել փակ հաստատություններին նվիրված մրցույթում, որը կազմակերպել էր Հանրային լրագրության ակումբը:

2020

- «Հետք»-ի փողքասթների պրոդյուսեր Սամսոն Մարտիրոսյանը 2-րդ տեղի մրցանակին է արժանացել «Կրոնական հանդուրժողականության լավագույն լուսաբանում» ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ՝ եզրիններին նվիրված իր էպիզոդի համար: Մրցույթը կազմակերպել էին «Եվրասիա» համագործակցության հիմնադրամը և ՀՀ-ում Նիդերլանդների դեսպանությունը:
- Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Թվապատում» մրցույթի «Ստուգված է» անվանակարգում լավագույնն է ճանաչվել «Հետք»-ի լրագրող Սեդա Հերզնյանի «Հայաստանից 3 տոննա ոսկերչական իրերի կիսապատրաստուկ է արտահանվել Ռուսաստան. պատմություն՝ կասկածելի ցուցանիշներով» նյութը:
- «Թվապատում» մրցույթի «Հատուկ մրցանակ՝ մարդասիրական թեմաներով» անվանակարգում հաղթող է ճանաչվել «Հետք»-ի «Կարենն ինձ թներ սվեց» մուլտիմեդիա նյութը, որի հեղինակներն են Մարինե Մարտիրոսյանը և Վահե Սարուխանյանը:

2021

- Ապրիլի 14-ին Հետաքննական լրագրության Եվրոպայի հիմնադրամը (IJ4EU) գերազանցության մրցանակի է արժանացրել «Տրոյկա լվացքատուն» անդրսահմանային հետաքննությունը, որի մասնակիցներից էր «Հետք»-ը՝ որպես Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի լուսաբանման նախագծի (OCCRP) անդամ:
- «Հետք»-ի թղթակից Սեդա Հերզնյանը հաղթող է ճանաչվել Հայաստանի բանկերի միության հայտարարած՝ «Տարվա լավագույն ֆինանսաբանկային

հրապարակում» մրցույթում, «Լավագույն առցանց հոդված»
անվանակարգում:

- Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «Թվապատում» մրցույթի
«Դիտակ. հետաքննական լրագրություն» անվանակարգում մրցանակ են
ստացել «Հետք»-ի լրագրող Տիրայր Մուրադյանը և լուսանկարիչ Սարո
Բաղդասարյանը՝ «Սևանի ափի քանդման ենթակա շինությունների տերերն
ու ճեմուղու կառուցման ծրագիրը» նյութի համար: